ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
N 16/21-2 որոշման

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կարիքների համար վառելիքի (բենզին պրեմիում, բենզին ռեգուլյար, դիզելային վառելիք) **ձեռքբերման N «ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-15/1-16/21» ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի**

ք. Երևան **06.04.2016թ.**

Մասնակցում էին՝ **Նախագահ՝** Ա. Մարտիրոսյան

Անդամներ՝ Դ. Գասպարյան, Կ. Անդրիասյան

Քարտուղար՝ Հ. Հովհաննիսյան

Նիստին ներկա էին «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ,

«Ֆլեշ» ՍՊԸ ներկայացուցիչները

1. Տեղեկություններ գնման նախնական պայմանագիր կնքած այն անձանց (անձի) մասին, որոնց պատվիրատուն ուղարկել է գնային առաջարկ ներկայացնելու ծանուցում

«ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-15/1-16/21» ծածկագրով մրցույթի շրջանակներում aprang-15-1@shh.gnumner.am էլեկտրոնային հասցեով հայտ է ուղարկվել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին, միաժամանակ հայտարարությունը տեղադրվել է http://gnumner.am/?module=hosting&utility=file_download&file=168111 հասցեում:

2. Տեղեկություններ գնային առաջարկներ ներկայացրած մասնակիցների մասին

N	Մասնակցի	
	Անվանումը	**Գնային առաջարկը ներկայացնելու ամիսը, ամսաթիվը**
1	«ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ	06.04.2016թ.
2	«Ֆլեշ» ՍՊԸ	06.04.2016թ.

2.1 Գնային առաջարկներ պարունակող ծրարները բացվել են 06.04.2016թ. ժամը 15^{00}-ին Երևան Վարդանանց փակ. 8, 5-րդ հարկ, Ադմինիստրատիվ և ֆինանսական տնօրենի աշխատասենյակում:

2.2 Գնային առաջարկներ այլ մասնակիցներ չեն ներկայացրել:

3. Տվյալներ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.

«ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» և «Ֆլեշ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված ծրարները կազմված էր հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր առաջարկում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

N ***«ՀՀԳՆԱՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-15/1-16/21»*** ծածկագրով մրցույթի գնային առաջարկների ներկայացման հրավերով սահմանված կարգով մասնակիցները փակ կնքված ծրարով ներկայացրել էին գնային առաջարկ՝, ինքնարժեքի հաշվարկ, հայտարարություն մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իրենց հատկանիշների համապատասխանության և գրանցման պահից հետո դրանց առկայության, ինչպես նաև հրավերով սահմանված տեխնիկական հատկանիշներին համապատասխան *ապրանքների մատակարարման* մասին: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից:

5. Մասնակիցների գնային առաջարկները

h/h	Ապրանքի անվանումը	Չափման միավորը	Գնի առաջարկները / դրամ/			
			«ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ		**«Ֆլեշ» ՍՊԸ**	
			Առանց ԱԱՀ	Գինը	Առանց ԱԱՀ	Գինը
1	Բենզին «Պրեմիում» (18 000լ)	լիտր			**5 775 000**	**6 930 000**
2	Բենզին «Ռեգուլյար» (17 000լ)	լիտր			**5 170 834**	**6 205 000**
3	Դիզելային վառելիք ձմեռային (100 000լ)	լիտր	**31 000 000**	**31 000 000**	34 000 000	34 000 000

ՀՀ կառավարության 10.02.2011թ. «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 44. կետի 5-րդ ենթակետի «ա» ենթակետի պահանջների համաձայն գնահատող հանձնաժողովը Չափաբաժիններ 1-ի և 2-ի մասով մասնակցի կողմից լիազորված ներկայացուցչի հետ գների նվազեցման նպատակով վարել է բանակցություններ, որի արդյունքում մասնակցի կողմից ներկայացվել է նոր Գնառաջարկ:

Մասնակցի կողմից ներկայացվել է նոր գնային առաջարկ, որը արտացոլված է ստորև.

h/h	Ապրանքի անվանումը	Չափման միավորը	Գնի առաջարկները / դրամ/	
			« Ֆլեշ » ՍՊԸ	
			Առանց ԱԱՀ	Գինը
1	Բենզին «Պրեմիում» (18 000լ)	լիտր	5 700 000	6 840 000
2	Բենզին «Ռեգուլյար» (17 000լ)	լիտր	5 100 000	6 120 000

«ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» և «Ֆլեշ» ՍՊԸ-ների կողմից մրցույթի գնային առաջարկների ինքնարժեքի հաշվարկում թվաբանական անճշտություններ չկան:

6. Հանձնաժողովը որոշեց.

6.1 1. և 2. չափաբաժիններով — 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «Ֆլեշ» ՍՊԸ - ին

6.2 3. չափաբաժնով — 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ - ին

2-րդ տեղ զբաղեցնող ճանաչել «Ֆլեշ» ՍՊԸ - ին

6.3 Հանձնարարել Հանձնաժողովի քարտուղարին՝

6.3.1 Սույն արձանագրության լուսապատճենը տրամադրել մասնակիցներին,

6.3.2 Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային եղանակով՝

ա/ Հարցում ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ ըստ առանձին չափաբաժինների առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ,

բ/. Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

6.4 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 13.04.2016թ-ին ժ. 10^{00}-ին ՝ «ք. Երևան Վարդանանց փակ. 8, 5-րդ հարկ, Ադմինիստրատիվ և ֆինանսական տնօրենի աշխատասենյակ» հասցեում:

Ընդունվել է կողմ 3, դեմ 0:

7. Նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ ..... Արմեն Մարտիրոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ ..... Դավիթ Գասպարյան

..... Կարեն Անդրիասյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ..... Հայկ Հովհաննիսյան